

հատ.	
Յառաջ տարեայ	118
Բանաստեղծութիւնք, Զրոյցք, Առակախօսութիւնք (Apologue)	11
Պատմութիւնք և Աշխարհագրութիւնք	9
Քերականութիւնք և Բառարանք	9
Աստեղագրանութիւն, Աղթարք, Բըժըշկարան, Հմայք, Գուշակութիւնք	9
Երկու մեծ հատորք, բովանդակելով երեք հարիւր և քսան Հայերէն նամակներ, պարտամուրհակներ, բեռնագիրներ, հաշուեցոյցք, կտակներ և այլ թուղթեր, գրուած Նոր Զուլայէն (Ապակաւ), Բասրաէն, Սուրաթից, Մաղրաւից և Կալկաթաից, 1733 մինչև 1748 տարիներում *	2
Այլևայլ գործք և զրութիւնք	6
Ընդ ամենայն	164

* [Երանօրոյիս. — Այս երկու հատորներն կրեն թուանշան *Lansdowne* 1074 և 1078: Յամին 1746, մինչդեռ Գաղղիացիք և Անգղիացիք պատերազմէին միմեանց ընդդէմ՝ Անգղիացի Ծովապետն Գրիֆին (Admiral Griffin)՝ Հնդկական Ովկիանոսում բռնագրաւեց մի առաջատանաւ Սանտա Կատարինա անուամբ, զոր Սպանիացի մի ընկերութենէ ունենց Հայ վաճառականներ վարձելով և բեռնաւորեալ արծաթիւ, Բասրաէն նաւորդութեան մէջ էր առ Կալկաթա: Յամին 1751, յիշեալ հայ վաճառականներն դատ բացան՝ Լոնտոնի մէջ՝ Անգղիական տէրութեան ընդդէմ, պահանջելով կամ զոհաբացուիչ փախարհութիւն ըստ տեսակին, կամ իւրեանց ապրանաց արժէքն: Սոքին երեք հարիւր և քսան նամակներ և այլևայլ թղթերն յանդիման բերուեցան ի նպաստ իւրեանց դատին: Ի լրումն դատավարութեան՝ առ

աջին Լորդ Լանդաուն ձեռք բերեց այս նամակներն, և վերջ ի վերջոյ՝ նուիրեց Բրիտանական Թանգարանին:

Ս. ՏԵՐ Մ. ԳՐԻԳՐԵԱՆ,
(Շարունակելի)

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՁԵՌԱԳԻՐՔ

Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԻՆ

Յարգելի Տօքթ. Վահր. Յ. Թորոքման Պաղարիս մէջ իր բնակութեան պարագային օգտուելով, միանգամայն արգիւնագործելու դիտամբ իր ժամերը յօգուտ Հայ Բանասիրութեան՝ կատարեց «ԲԱՋՄԱՎԷՊ»-ի համար՝ Մայրավանքիս բժշկական ձեռագրաց մասին ուսումնասիրութիւն մը՝ հետեւալ ընծայականով. «Կը եռօրեւ Յիշատակին վաղածեռի թարեկամիս ՀԱՅՐ ԱՐՄԵՆԻ ՍՈՒՐԵԱՆ, բազմավատակ վարդապետին Միտարեան վեհաճեալ, որ առաջին անգամ 1881-ին փորձեց գրել Հայ Բժշկական Պատմութիւն, որովհետեւ հազիւ մաս մը հրատարակած էր՝ երբ վախճանեցաւ ի Կ. Պոլիս 7 Օգոստոս 1882-ին:

Սոյն յօդուածը հաճոյքով կը սկսինք հրատարակել այս էջերուն վրայ:

ԽՄԲ.

Ա.

Գաղիկ Հեթումեան բժշկարան

Բազմերախտ Հ. Ղևոնդ Ալիշանի ՍՈՒՐԵԱՆ հրատարակութենէն ի վեր (1885) մասնաւոր ուշադրութեանս և հետաքրքրութեանս առարկայ էր, անոր 337րդ էջին վրայ դրուած երեք Յիշատակարաններ թժշկարանի մը, որուն համար գրուած է թէ՛ 1°. ընդօրինակուած է 1294 թուին յունար 8րդ, 2°. հրամանաւ Հերոս Բագատրի, 3°. ձեռամբ՝ ձերտի վարդ մըր տիշիի և թէ՛ 4°. Թարգմանուած է եղեր Արաբերէնէ Հայերէնի՝ «Ի ԺԱՄԱՆԱԿՍ ՅԱՂԹՈՂ ԹԱԳԱՆՈՐԻՆ ՀԱՅՈՑ ԳԱԳԱՍ»:

Այս անգամ, երբ բախտը զիս վննետիկ կը նետէ, առաջին պարտականութիւնս կ'ըլլայ, երթալ Ս. Ղազար, թղթատել Հայ բժշկական Պատմութեան այդ պատկանելի ու թանկագին հնութիւնը, զոր

Մխիթարեան Մխարանութիւնը մեծ հաճոյակատարութեամբ տրամադրութեանս ներքե ղրաւ, զիս երախտապարտ թողլով իրեն։

Ուստի այս առթիւ կատարած իմ տկար ուսումնասիրութեանս արդիւնը՝ կարևոր կը համարիմ ծանօթացնել հրապարակաւ։

*

Սոյն թժկարանը հաստեկել հատոր մ'է, և Մխիթարեանց Մատենադարանին 1281 թուահամար ձեռագիրը, ունի 20 հրդ. մեղր երկայնութիւն, 15 հրդ. մեղր լայնութիւն. և 6 հրդ. մեղր թանձրութիւն։

Լաւ կազմուած ու խնամով պահուած հատոր մ'է. ամբողջովին մազադաթեայ, զոր կը բաղկացնեն 198 թերթ՝ 396 էջերով։

Գիրը ծայրէ ի ծայր բոլոր է՝ յոյժ գեղեցիկ, դիւրաւ ընթեռնլի. գրութիւնը միասին է և մէն մի էջ՝ ունի մօտաւ. րապէս 25-27 տող. գլուխները կը սկսին զարդագրերով. լեզուն է ոսմիտըն։

Ամբողջ հատորը կը պարունակէ երեք տարբեր աշխատութիւններ։

Առաջինը՝ Գագիկ թագաւորին օրով թարգմանուածն է, որ կ'աւարտի 147րդ էջին վրայ։

Երկրորդը՝ Մխիթար Հերացի բժշկապետին Զեմսման Մեհմեդաբեկին մէկ մաս, որ 148-232րդ էջերը կը զբաւէ։

Իսկ երրորդը՝ այլևայլ ախտերու զանազան դարմաններ յանձնարարող ընդարձակ Դեղաբանութիւն մը, որ 233րդ էջին վրայ սկսած՝ կ'աւարտի 395 էջին վրայ։

*

Ունի երեք Յիշատակարան, երեքն ալ վերոյիշեալ ծերունի վարդ Մարիչցիի ձեռքովը արձանագրուած, զոր Հ. Ալիշան լուսանկարել տուած է ժամանակին, Սիւստանի մէջ։

*

Ինչպէս կ'երևի՝ բժշկարանս կը թարգմանուի նախ՝ Գագիկ թագաւորին ժամա-

նակ. այս Գագիկը՝ ըստ Հ. Արսէն Սուքեանի՝ (Բագմավեպ, 1881 էջ 33 և 34), և Հ. Ղևոնդ Յոննանեանի՝, պէտք է ըլլայ Գագիկ Առաջին Բագրատունի մեծ արքայն, որ իշխած է 990-1020, որով բժշկարանս 10րդ - 11րդ դարու գործ մը կ'ըլլայ։

Յայտնի չէ թէ ո՞վ եղած է անոր թարգմանիչը, բայց կ'երևի թէ բաւական յարգի աշխատութիւն մը համարուած էր այն, որ երկուքուկէս և աւելի դար յետոյ Հիթում թագաւոր՝ տէրը Կոռիկոսի, կը հրամայէ վարդ Մարիչցիի ընդօրինակել զայն, հաւանաբար՝ կորուստէ փրկելու համար։

*

Կը սկսիմ դիտել նախ ձեռագրին առաջին բաժինը, այն՝ որ հազար տարուան հնութիւն մը ունի, և 600 տարուան վերածնունդ մը։

Հատորին սկզբնական վեց թերթը կիսով իմի մաշած ու եղծուած՝ կը պարուհանկէ տարբեր նիւթով զբարբալ գրութիւն մը, որ Արիստոտէլի անդամազննական գործերէն քաղուած մ'ըլլալ կը թուի. այս գրութիւնը կ'աւարտի 12րդ էջին վրայ։

13րդ էջէն կը սկսի թժկարանը, իր պարունակած նիւթերուն մէկ ցուցակովը. որ ընդ ամէնը կը բաղկանայ 35 գլուխներէ հետեւեալ կարգաւ.

Ա. Վասն երակ ձանալեւոյ։ — Բ. Վասն կարուրա ձանալեւոյ և եշանոց եոցին։ — Գ. Վասն պոսիւսակի ձանալեւոյ զարդեկ և զվատն և քրտան և տեղեկոսեանց հիսանդին։ — Դ. Վասն բէ քանի՞ դիմօք մարք է յժկին գնիսանդն ստածն։ — Ե. Վասն ձեւնարտայի եշանոց, իմանալ զինեաց և զմահոն։ — Զ. Վասն ամենացեղ մրտոյու իւրոյ։ — Է. Վասն ամենայն ցեղ Հսպ.

1. «Հետազոտութիւնք Նախնեաց Ռամկոթեկին վրայ» Մասն Ա. Տետր Ա. էջ 135.

պերոյ և քրչած սապսի: — Ը. Վասն ամենայն ցեղ մանոր յոժման դեղերոյ: — Թ. Վասն ամենայն ցեղ խոռոսերոյ: — Ժ. Վասն ամենայն ցեղ Մամռնեոյ: — ԺԱ. Վասն յորկարի որ է լիզելիք՝ զոր մատամբ ասոսի: — ԺԲ. Վասն ամենայն ցեղ ըմպելիստեոյ: — ԺԳ. Վասն դեղերոյ զարուքեանց զոր ա ա (մէկ մէկ) ասոսի: — ԺԴ. Վասն ամենայն ցեղ ձիւրերոյ: — ԺԵ. Վասն հայիթի սնուցանելոյ և զնմպիլ և կզմոխի: — ԺԶ. Վասն ամենայն ցեղ քաւոսքս առնելոյ և Ռոսպըստու: — ԺԷ. Վասն ամենայն ցեղ տեմեմեոյ: — ԺԸ. Վասն այլ մամռնեոյ և ըմպելիստեոյ: — ԺԹ. Վասն ամենայն ցեղ բոսսոց և տեգոց և սագոսկարոսթեանց եոցի: — Ի. Վասն ամենայն ցեղ Հնդկաստ: — ԻԱ. Վասն ամենայն ցեղ Մրգերոյ: — ԻԲ. Վասն ամենայն ցեղ բանջարոյ և խոտերոյ: — ԻԳ. Վասն ամենայն ցեղ համեմեոյ: — ԻԴ. Վասն ամենայն ցեղ մսերոյ և ձկանց: — ԻԵ. Վասն ամենայն ցեղ կրերոյ: — ԻԶ. Վասն ամենայն ցեղ չրերոյ: — ԻԷ. Վասն ամենայն ցեղ Անուշահոտաց: — ԻԸ. Վասն ամենայն ցեղ քրիակ առնելոյ ընդդէմ մահացոս դեղոց և մքրոդիտոս դեղ: — ԻԹ. Վասն թէ որպէս գոյամա մանուկն յորովայնի մօր: — Լ. Վասն յնորեանց մարդկան թէ որպէս բաժանին յեղանակս տարւոյն: — ԼԱ. Վասն որ աճ կամ կարիձ հարկունե զմարդ: — ԼԲ. Վասն երեւնանի՝ լապաստակի և սպըտրի օգտից: — ԼԳ. Վասն թէ ի Դեբրոց ո՞ր է Հատցել առ մարդն: — ԼԴ. Վասն ելանաց սեանդ առնելոյ և այլ խոտերոյ օգոտքեանց: — ԼԵ. Վասն մեկնութեան դեղոց՝ որ քարգմանեցաւ յայլ յեղոս ի մերս:

*

Սոյն ցուցակին անմիջապէս կը յաջորդէ Հ. Ալիշանի լուսանկարած Յիշատակարաններուն առաջին 6 տողը, որ է՝

« Զբազատորաւ այր՝ զքիստոսապաշտ
« խոհեմ: և քաչարի աշանց պարոն, զրաւ
« ընհամբան Հերոմ, տէր կոռիկոսոյ
« յիշեալիք ի Քրիստոս, որք Քրիստոսի
« էք վիճակեալք՝ որոյ հրամանաւ սկիզբն
« արարի գրութեան յոքնանեմար և յամեւ
« հայնի պիտանցոս և հարկաւոր տառիկ
« թշկարանի՝ եւ սպիկար ծերունիս Վարդ
« մրտիշի: Սկիզբն ի բոնաւ Հայոց ԶԽԳ,
« յամանեմ յունուարի ԻԸ » (այսինքն՝
743 + 551 = 1294):

Այս Յիշատակարանէն յետոյ 15րդ էջին վրայ կը սկսի բուն բժշկարանը, էջին վերելք նկարուած կայ խորան մը չորս համաչափ քառակուսիներ ըով ըովի, և մէջ տեղը վրան գէմ գէմի երկու թուռն, այս քառակուսիները երկրաչափական համանման սիրուն գիծերով և ուղղանկներով լեցուած են, առաջինը և չորրորդը կը հանգչին մէկ մէկ նման քառակուսիներու վրայ, որոնց ձևացուցած միջոցին մէջ կը կարգացուի՝ կարմիր գիւրերով չորս տող վերտառութիւն մը՝ որ է.

Բժշկարան՝ զոր

փոխած է ի տաճիկ

յեղոս ի հայս, ի ժամանակս

յաղրոյ բազատորին Հայոց Գագկա:

Այս կը սկսի բուն բժշկարանը՝ վերագրեալ ցուցակին զլիակարգութեանը համաձայն:

Երկար կ'ըլլար արդարեւ մանրամասն դիտել բոլոր Գլուխներու նիւթերը, մանաւանդ՝ որ ներկայիս՝ անոնք բժշկական հետաքրքրութիւն զրգռող բաներ մը չեն վարդապետեր. բայց կ'արժէ քանի մը մէջբերութիւններ ընել, ամբողջ գործին վրայ գաղափար մ'առնելու համար:

Ա. Գլուխէն՝

« Պարտ և արժան է զերական ճանաչել
« Գհհանդին՝ այսպիսի նշանաւքս. զվա-
« տուսն և զուսուսն՝ զերկայնն և զկարճն.
« և այսի կարես գիտել և իմանալ, որ եփ
« մարդն առողջ լինի, համակ տեսնուս
« զերակն՝ որ եփ հիւնդնա կարէ իմանալ
« զշահն և ըզգնն. Գի Ա բժշկապետներն
« զայս են հրամայել: Ապա եփ զմարդոյն
« երակն բռնես մատներովոյ ի վերայ՝ և
« աղեկ ի լոյս խաղա ու դէպ ի վեր ի
« քաղուկն երևնա՝ այսոր անուն յերկայն
« ասեն. ապա թէ չերևնա շատ դէպի վեր
« և ի քաղկին մէջն երևնա՝ այսոր անուն
« յայն ասեն. ապա թէ մատինտ ներքեւ
« ի զատ կու հանէ՝ այսոր անուն ասեն.
« ապա թէ մեղմն չլինի և շատ խաղա
« մատինտ ներքեւ՝ այսոր անուն ասեն:
« Ապա թէ երակն մատինտ ներքեւ պահ
« մի յերկայնա ու պահ մի կարճնա՝
« այնոր յերկայն ասեն. ապա թէ երբ
« զմատներդ ի վերայ դնես՝ ու հայնց
« թուենա թէ ի վեմ հասաւ՝ այսոր բոյլ
« ասեն: Ապա թէ Բ ձեռացն երակն հա-
« ւասար լինին՝ այնոր դորդ ասեն. ապա
« թէ մին քան զմին աւելի լինի կամ
« պակաս՝ այսոր փոխոյն ասեն »:

Երակի՝ ըսենց զարկի տեսակները այս-
պէս թուելէ յետոյ, կը խօսի դեռ տղու,
չափահաս տարիքի, ծերերու, յղի կիներու
շնչերակազարկի տեսակներուն վրայ, և
նաև՝ այս զարկերուն ամառ ու ձմեռ, և
զարուսին կամ աշունին ինչ փոխախու-
թիւններ կրելը, ու ստամոքսին լի կամ
պարապ եղած ատենները ունեցած փո-
խակերպութիւնները:

Յետոյ կ'անցնի նկարագրել այլ և այլ
հիւսանդութիւններու միջոցին երակին ունե-
ցած ձևերը, ինչպէս նաեւ մահամերձին
երակը:

Բայց Գլուխին վերջը՝ կը տեսնենք թէ
այս բոլորը Գաղիանոսի գործերէն զրեթէ
նոյնութեամբ քաղուածոյ է, բան մը՝ որ
աւելի պատուաւոր կ'ընծայէ ձեռագրին
վարկը:

ԺԹՐԴ Գլուխէն՝ վասն բուսոց և տեղոց
և օգտակարութեանց նոյնի.

« Պատմէ մեզ մեծ իմաստասէրն դէոս.
« կորիզոս վասն բուսոց և տեղոց՝ զպի-
« տանին և զօգտակարսն ցուցանելով:
« Ուստի՝ փոթով է, և այս է գործ նորա,
« զտերեն եփել և զայն ջուրն հովցնել
« ու պարզել, և աղցած զգթորի ներս
« խառնել և օծել զարանք կամ գոտք՝
« զոր օձ հարկանէ օգտէ: Եւ ծծկան տղա
« թէ տաքնա և իր տերևովն ծածկես որ
« քրտնէ առժամայն թողու տաքութիւնն,
« և արմատն ու ծաղիկն ու տերեն թէ
« ծեծես ու տա ԶՂուրն որ խմէ որ փո-
« րանցութիւն ունին արգելու զփորն՝ թէ
« տեղատեսն խմէ՝ զարոյնն արգելու և
« ամենեկին ուստի և զա արոյն օգնէ ԱՎ: »:

Ուստի մասին պատմած այս օգտակա-
րութիւնները, արդի բժշկութեան մէջ ալ
մոռցուած չեն դեռ, կը գործածուի այն
իբրև ջերմահալած, մանուսնեղ անկէ ար-
տադրուած salicylat de soude, որուն
ինչ աստիճանի մեծ հրաշագործութիւններ
ունենալը յօդացաւի ատեն՝ յայտնի է
ամենուս:

Ասոր նման է բոլոր գրուածը, որ կը
պատմէ տեսակ տեսակ բոյսերու և տուն-
կերու, զանազան հիւսանդութեանց վրայ
ունեցած բարի ազդեցութիւնը: Յետոյ
կ'անցնի միսերու ու ձուկերու տեսակնե-
րուն և կը գրէ՝

ԻԴ Գլուխէն.

« Միսն Բ ազգ է, առաջինն կերակրէ
« և մէկայլն մահրար: Իսկ ապա այն որ
« կերակրէ Բ ցեղ է. Ա՝ որ լօկ զանձն
« կերակրէ, որպէս ուլի միս և զառին և
« դոցին նման ի դեղ չ'մտնեն. մէկայլն
« կերակրէ և ի դեղ խառնի, որպէս ուղտ
« միսն որ զոդո օգտէ և ալլի եթէ չոր
« աղաս ու տաւ. կամ աքիսին միս որ
« օգտէ ուխտաւորի, և նն այլք, բայց
« չգրեցաք զի չ'են ուսուիրի:

« Ծննդուկ տաք ու չոր է. Միրամարզն
« զենարար է. կուռնգն և արօսն ծանր
« են և անհալ »:

« Ասասցուք և վասն ձկանց և օգտու-

« Թեանց նոցին. Ա դաւար ձուկն հով ու
« գէճ է և զպլզաքն շատցնէ.... մանր
« ձուկն լաւ է քան զմեծն՝ և որ ի գնացը
« Զուր լինի և ի շատ և յորձանուտ և
« ավզուտ և կամ մանրքար, կամ կարմիր
« հողիջրին սահմանքն. այն որ խորված
« ձուկն լաւ է քան զխաշած և կաղնի
« փայտով խորվէ կամ որթ հօտով.... և
« թէպէտ յանուանէս չեն գրել իմաստաւ,
« սքըքս, այլ յիմա տխմարութենէս յաւեւ
« լում զայս բանս. ի ձկունքն թեթեւ՝ կարւ
« մրախայտն է. իսկ ձուկն՝ որ յեղեգնուտ
« տեղ լինի և ի շամբ և ի նիկ ջրեր՝ չէ
« աղէկ.... Աւձուկն պեղծ է....

Իեղզ Գլուխէն, ՎԱՍՆ ԱՄԵՆԱՅՆ ՏԵՂ
ԿԱԹՈՐՈՑ:

« Յառաջ զկաթն յիշեմք, զի Գ ցեղ բնու
« թիւն ունի. առաջին ջուրն, Բ, կարագն և
« Գ, պանիրն. պանիրն՝ հով է և կապ և
« ծանր և յուշ գնա ի ստամոքէ և թէ հալի
« շատ կերակրէ. կարագն՝ տաք ու գէճ, և
« զբնու՝ կակուղ պահէ, զայրած սաֆրան
« հանէ և օգտակար է անձին և քարի և
« սաւտաթի՝ հազի որ ի տաքէ և ի չորէ »:

« Այծու կաթն թեթեւ է, և պախրէին
« ծանրը. եփ ծնանի պախրէն՝ հետ ի
« աւուր ապա կեր զկաթն. և կաթն ըս
« պիտակն է լաւ և որ ոչ շատ նօսր լինի
« ոչ թանձր և սրբամուտ լինի.... կովու
« կաթն լաւ է քան զգոմէին »:

Զմե երկարեր գրութիւնս աւելի մէջ
բերումն են ընելով, բայց կը դիտեմ որ
յետագայ դարերու մեր բոլոր բժշկարան
ները՝ գրեթէ մեծապէս ձուլուած են Գա
գիկի օրով թարգմանուած այս բժշկարանին
վրայէն, որուն համար՝ եթէ կ'աւանդուի թէ
Արարբերէնէ վերածուած է հայերէնի՝ պէտք
է ընդունել թէ իսկապէս Գաղիանոսի
գործերէն քաղուած մ'է, ինչպէս արդէն
յայտնեցի:

Բժշկարանին աւարտումէն յետոյ կը
գտնենք երկու թիրթ պարապ, որուն ա
ռաջինին վրայ կը կարդանք հետեւեալ
անթուական հինգ տող Յիշատակարանը.

« Յիշատակ է առագ հեքիմարան Տէր
« Մկրտիչ եպիսկոպոսին. և ծնողացն փի-

« նադարին շահգատին, և ամուսնոյն ցոյ
« խարունիւն. զոր առ Աստուած են փոխե
« ցեալ. ի վայելումն որդոյն յարութիւնին »:

Այս պարապ էջերուն կը յաջորդէ սա
կայն կարեւոր գլուխ մը՝ ԼԵՂ, որ հատորին
պարունակած օտարանուն զեղբորու թարգ
մանութիւնն է. այրուքենական կարգաւ
գրուած է այն և կը հասնի մինչև Ս գիրը.
և կ'ամփոփուի 143-146րդ էջերուն մէջ:

Մեր բուսական առաջին բառարանը
կրնանք համարիլ զայս, որ ունի արդարեւ
հայերէն գեղեցիկ բառեր, որպէս՝ Աֆիուն
== սև խաշաշ, Արքոտանոն == բարձիկ,
Եկի, Առթիւր == վարդաւանդ, Բաղասիոն՝
ճուլենար == նաւ ծաղիկ, Խոռն == վոյրի
դողմն, Կալապահանակրի == ջրկոտմն,
Սամիրան == հողմտփայտն, Սահրկապուրա
== լեռնախոտ, Սամիւրարապի == տաճիկ կը
էջ, Ալօտոս == սխտոր և այլն:

Այս բառարանին վերջն ալ գրուած է
դարձեալ.

« Յիշատակ է հեքիմարան տէր Մկրտիչ
« եպիսկոպոսին, և ծնողացն փիւնդարին,
« շահգատին ի վայելումն որդոյն յարա
« թիւնին »:

Եւ այսպէս բժշկարանս կը ներկայա
նայ մեզ իբրև անդրանիկ հայ բժշկական
գրուած, որուն նախատիպը ցաւալի է որ
ցարդ չէ յայտնուած. և անոր այս ընդո
րինակութիւնն ալ գերծ չէ սխալներէ:

Այսու ամենայնիւ այս ալ, որ 13րդ
դարու կնիքը կը կրէ, ո՛չ նուազ յարգի է
և կարեւոր՝ հայ բժշկական պատմութեան
տեսակետով, որովհետև մտադիւր քաղա
տութիւն մը ցոյց կու տայ թէ՝ Հերացի
բժշկապետին և Ամիրտովաթ Ամասիացի
ին երկասիրութիւնները մեծաւ մասամբ
փոխառութիւնն են ունին Գագիկի բժշկա
րանէն, ինչպէս նաեւ հայկական տպա
գրութեան նախախաչըրքներն եղող « Ծայի
նոս Հաքիմ » անուն հրատարակութիւնը:

ՏՕԲԹ. ՎԱՆՐԱՄ Յ. ԹՈՐՈՍԵԱՆ

(Շարումակելի)

— 52 —